

ԱՐԾԻՒ ԵՒ ՃԻՃՈՒ

Ֆ Ր Ո Ւ Ի Գ'ից

Թարգմ. Ա. Բ Ժ Ի Լ Ե Ա Ն
ԴԱՏՈՒԽՅԱՆ

Հսկալ թևերը լալն-լալն տարածած,
Հզօր Արծիւը ուղղեց իւր թռիչք
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
Դէպի անսահման կապուտակ երկինք:
Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում.
Եւ վերջ ի վերջու լոգնած ու դադրած՝
Նա նստեց հսկալ մի լեռան կրծքին,
Որի գագաթը մինչ երկինք հասած՝
Սարսափ էր ազդում վերև նալողին:
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
Եւ, շուրջը գոռող հայեացք ձգելով,
Իւր արքայական ձայնով ահեղ
Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
Մենակ ու ազատ այս լեռան վերայ,
Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
Իմ գահն է—անհուն այս երկնակամար,
Որոտ ու ամպեր—ոտքիս պատւանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան...
—«Ե՞ս»
Լսւեցաւ լանկարծ մի ձայն թոլլ, բարակ՝

Մեծապանծ թռչնի հէնց ոտքերի տակ.
 — «Ե՞ս—անձրւալին ճիճուս աննշան»:
 «Ի՞նչպէս, դու այստեղ, իմ դէմ յանդիման...
 Ասա ինձ շուտով, ճիճուս անպատկառ,
 Որտեղից դու այս ամպերին հասարա...
 — «Այն նեխւած ճահճից, Արծիւ ինքնագով,
 Ուր դու ծնւած ես քո ալդ վեհ փառքով,
 Այն նեխւած ճահճից, որտեղ ալժմ դու
 Զգւում ես անգամ հայեացք ձգելուա:
 «Բայց բնչ հնարքով, դու միջատ չնչին,
 Հասար իմ անհաս ամպազարդ գահին.
 Ասա, պատմիր ինձ, բնչպէս, բնչ կերպով...
 — «Ի՞նչպէս: — Սողալնվ, Արծիւ, սողալնվ,...

Մասկու. 1889 թ., 27 մայիսի: